2026 թվականի հունվարի «23»-ին կնքված
«1032-11002/2026-ՀԿԼՏ12» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Վանաձոր 1) |
| Դրամաշնորհի N | ԱՍՀՆ-ԴՄ-ՏՊԽԾ-26/8 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026 - 31.12.2026 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026 - 31.06.2026 |
| Ներկայացման օր | 09.07.2026 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգար Կարապետյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.

1) Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն
2) Կենցաղային սպասարկում
3) Բժշկական օգնություն և սպասարկում
4) Լվացքատան ծառայություն
5) Հիգիենիկ պարագաների հատկացում
6) Մշակութային միջոցառման կազմակերպում

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով

են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

| |
|---|
| **Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն**<br>**Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն**<br>Ապրիլ-մայիս-հունիս ամիսներին սոցիալական աշխատողների կողմից կատարվել են տնային այցելություններ շահառուների բնակարաններ, ծանոթացել շահառուների սոցիալ-առողջապահական ընթացիկ վիճակին: Հունիս ամսին սոցիալական աշխատողները կատարել են շահառուների կարիքի վերագնահատումներ:<br>Այս ժամանակահատվածում սոցիալական աշխատողները ակտիվ ներգրավվածություն են ունեցել նաև պետության կողմից հատկացվող սոցիալական աջակցության գումարները շահառուների բանկային քարտերին հասցեագրման աշխատանքներում՝ ակտիվ համագործակցելով ՄՍԾ Վանաձորի տարածքային կենտրոնի հետ:<br>Կատարվել են թվով 10 շահառուների ապրիլ--հունիս ամիսների փաստագրում անապահովության գնահատման համակարգում:<br>1 շահառուի համար դիմում է ներկայացվել ՄՍԾ Վանաձորի տարածքային՝ միանվագ դրամական օգնություն ստանալու համար:<br>1 շահառուների համար սոց.աշխատողը դիմել է Վանաձորի համայնքապետարան՝ գույքահարկի վերաբերյալ տեղեկանք ստանալու համար:<br>1 շահառուի համար սոցիալական աշխատողը դիմել է Լոռու մարզպետի աշխատակազմին՝ վիրահատության համար անհրաժեշտ ծախսերի համար որոշակի աջակցություն ստանալու համար: Դիմումն ընթացքի մեջ է:<br>2 շահառուների համար սոցիալական աշխատողը փաստաթղթեր է ներկայացրել ՄՍԾ Վանաձորի տարածքային կենտրոն՝ աջակցող միջոցներ ստանալու համար:<br>1 շահառուի համար սոցիալական աշխատողը դիմել է անձնագրային բաժին՝ նոր անձնագիր ստանալու համաև: Գործընթացը կազմակերպվել է:<br>2 շահառուների սոցիալական աշխատողն աջակցել է թոշակը իրենց նախընտրած բանկից ստանալու և բանկային քարտ ստանալու հարցում:<br><br>*Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:*<br><br>**Կենցաղային սպասարկում**<br>Հաշվետու ամիսներին սոցիալական խնամողների կողմից կատարվել է կենցաղային սպասարկում ՝ ըստ պետական չափորոշիչների՝ Ա խմբի շահառուներին կատարելով ամենօրյա այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2-ական այցեր: Այցելությունները կատարվել են նախապես կազմված այցելությունների գրաֆիկներին համապատասխան:<br>Սոցիալական խնամողները մատուցել են հետևյալ ծառայությունները. Մարմնի ամբողջական, մասնակի խնամք, տակդիրի փոխում, լոգանք, անձնական հիգիենայի պահպանում, սննդի պատրաստում, կերակրում, լվացքի կազմակերպում, արդուկում, բնակարանի հարդարում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուներին ուղեկցել են նաև խանութ, վարսավիրանոց, բանկ՝ քարտային թոշակը կանխիկացնելու համար:<br>Հաշվետու ժամանակահատվածում գործել է նաև լվացքատունը, որտեղ լվացվել, արդուկվել են շահառուների հագուստները և հատկացվել վերջիններիս: Այն շահառուները, ովքեր իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոցիալական խնամողները լվացքը հագուստները լվացել են շահառուի բնակարանում: |

*Ծրագրի շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, փան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների և կոմունալ վճարների շնորհիվ շահառուն ապահովված է իրեն անհրաժեշտ ապրանքներով:*

__Բժշկական օգնություն և սպասարկում__

Ապրիլ-հունիս ամիսներին բուժքույրերը շահառուների բնակարաններ այցելությունները կատարել են ըստ նախապես կազմված այցելությունների գրաֆիկի և պետական չափորոշիչների: Ա խմբի շահառուներին կատարել են շաբաթական 2-ական այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 1-ական այց: Ըստ անհրաժեշտության կատարել են նաև լրացուցիչ այցելություններ: Այցելությունների ժամանակ կատարվել են վերքերի մշակումներ, տակդիրի փոխում, արյան ճնշման, թթվածնի քանակի, շաքարի մակարդակի չափումներ, դեղորայքի ընդունման վերահսկում, միջմկանային , ներերակային ներարկումներ, խորհուրդներ, վերականգնողական վարժություններ: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել շահառուների թաղամասային բժիշկների հետ, ստացել են պետության կողմից հատկացվող դեղորայքը: Այս ամիսներին բուժքույրերը օգնել են շահառուներին ներբեռնել ԱՐՄԵԴ համակարգը, օնլայն հերթագրվել պոլիկլինիկա այցելություն կատարելու համար: Այս հարցում դժվարանում են գրեթե բոլոր շահառուները, քանի որ չեն տիրապետում համապատասխան հնտություններին:
2 շահառուների համար կազմակերպվել է շտապ բուժ.օգնության կանչ: 1 շահառուն վայր է ընկել (ի դեպ վերջին ժամանակներում հաճախ է վայր ընկնում), մյուս շահառուի մոտ նկատվել է ընդհանուր թուլություն և առողջական վիճակի վատացում:
2 շահառուի ուղղորդվել է բժշկի խորհրդատվության և զննության:
2 շահառուների ուղեկցվել է պոլիկլինիկա:

*Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների, դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների կայուն առողջական վիճակը:*

__Հիգիենիկ պարագաների հատկացում__

Հաշվետու ժամանակահատվածում շահառուներին հատկացվել են հիգիենիկ պարագաների փաթեթներ:

*Հիգիենիկ պարագաների տրամադրման շնորհիվ մեղմվել են շահառուների սոցիալական կարիքները:*

__Մշակութային միջոցառման կազմակերպում__

Հունիսի 25-ին ծրագրի 8 շահառուների համար կազմակերպվել է ժամանցային միջոցառում: Նպատակն էր խաղ-մրցույթների, ակտիվ հարց ու պատասխանի միջոցով բովանդակալից ու փոքր-ինչ տարբերվող դարձնել միայնակ տարեցների առօրյան: Նման միջոցառումների հիմնական առաքելությունը միայնակ տարեցներին հասարակություն ինտեգրելն է:

*Մշակութային միջոցառումները նպաստում են, որ շահառուները դուրս գան մեկուսացումից և իրենց հասարակության լիարժեք անդամը զգան:*

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են շաբաթական աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Ժամանցային միջոցառում
https://www.facebook.com/reel/1342940557171113
https://www.facebook.com/photo?fbid=1455072183323711&set=pcb.1455075039990092

Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Ելնելով շահառուների առողջական խնդիրներից, տարիքային առանձնահատկություններից, մշակութային միջոցառումներին հնարավոր չի լինում շատ թվով մասնակիցներ ներգրավել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությո

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

**Մայիսի 8-ին** բուժքույրերը մասնակցել են հոգեբույժ Գևորգ Փաշիկյանի հետ հեռավար հանդիպմանը՝ հոգեկան առողջության թեմայով: Հանդիպման ժամանակ ներկայացվել են հետևյալ թեմաները՝

✓ Գիտելիք այն իրավիճակների վերաբերյալ, երբ անհրաժեշտ է հոգեբույժի ներգրավում կամ շահառուի ուղղորդում համապատասխան ծառայության:
✓ Ծանոթություն հոգեկան առողջության խնդիրների առողջապահական դրսևորումներին և ուղղորդման հնարավոր ուղիներին:
✓ Ավելի հստակ պատկերացում՝ արդյոք ծրագրում անհրաժեշտ է ներառել հոգեբույժի կամ առողջապահական մասնագետի ներգրավում:
✓ Գործնական պատկերացում, թե ինչպես նախապատրաստվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ծառայության մատուցմանը:



2.7 Խնդրում ենք ներկայացնել շահառուների ցանկը՝ կից հավաստող փաստաթղթերով (մասնավորապես՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշումը կամ ֆունկցիոնալության գնահատման որոշումը) **ԼՂ սպասարկվող անձանց դեպքում՝**

| Հ/Հ | Անուն | Ազգանուն | Հայրանուն | ՀԾՀ | Մարզ | Հասցե | Սեռ | Հեռախոսի համար | Ծննդյան օրը, ամիսը, տարին | Սոցիալական խումբ (Հաշմանդամություն) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | |
| . | | | | | | | | | | |

իգական __________ հոգի
արական __________ հոգի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Ք. Երևան, կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ -01506515
Գլխավոր քարտուղար՝

-------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Հայկական Կարիտաս ԲՀԿ
Ք. Գյումրի, փ. Հ. Սարգսյան, նրբ. 3, տ. 8
ՀՎՀՀ - 05514397

Նախագահ՝ Ճորճ Միշելի Տնկայէ
Գնորգ Արք. Նորատունկեան

-------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարիտասի ԲՀԿ-ի տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | **Շահառուների թվաքանակը հաշվետու ժամանակահատվածի սկզբում/վերջում** | 70/ 69 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 62 |
| 2. | **Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը** | 31 |
| 2.1 | այդ թվում՝ կին | 29 |
| 2.2 | այդ թվում՝ 18-65 տարեկան | 4 |
| 2.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 2.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 2.2.3 | 40-65 տարեկան | 4 |
| 2.3 | 65 տարեկանից բարձր | 27 |
| 3 | **Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ)** | Ա - 7<br>Բ – 62 |
| 4 | **Կենցաղային սպասարկում** | 69 |
| 5 | **Բժշկական օգնություն և սպասարկում** | 69 |
| 6 | **Սոցիալ-հոգեբանական օգնություն** | 69 |
| 6.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 8 |
| 7 | **Խորհրդատվական օգնություն** | 22 |
| 8 | Այլ ծառայություն (նշել) լվացքի կազմակերպում | 9 |